

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՈՒԿ ՈՐԴԻՆ

Էն որ սովետական կառավարությունը Լեռ Կամսարին մինչև մահ հալածեց եւ արգելեց գրելը՝ թող որ ավստսանք, բայց ոչ մեկին զարմանք չպատճառի: Ախր, էդ անտերի վերաբերմունքը փոխադարձություն է ուզում: Էդ ե՞րբ երգիծաբանը սիրեց ու գլորգլորեց կոմունիստներին, որ նրանք էլ ապերախտ գտնվեցին վերջինիս համոզեալ: Անկեղծ ասած պետք է զարմանալ ու գնահատել, որ սովետները մեծ հանդուրժողականություն եւ մեծահոգություն ցուցաբերեցին մահապատժի չենթարկելով նրան: Ո՞ր խելքը գլխին կառավարությունը կարող էր մարտել երգիծաբանի այսչափ անառաքելի ատելությունը ու ծաղրունճանկը: Ո՞վ էր նրան իրավունք տվել այդքան հանդուգն ու մերկապարանոց հնչեցնել ու թմբկահարել բոլշևիկյան արատները: Մի՞թե գրողի մոտ իսպառ բացակայում էր ինքնապաշտպանական բնագոյը: Գուցե խաբվեց նախկինում դաշնակցական կառավարության «լիստացնող» վերաբերմունքից, որոնք այնքան խրախուսում եւ տանում էին նրա բոլոր սուր եւ խոցող «օյինքազությունները»:

1917 թվականին, երբ Ռուսաստանում պայթեց հոկտեմբերը՝ դոյրդաց նաեւ հեռավոր Հայաստան աշխարհը, Լեռ Կամսարի չարագուշանքը չուշացավ մամուլում՝ «Ազատության առաջին օրերը», 17 թ., «Նիկոլայ ցարին նամակը Ուլյանով Լենինին», 18 թ. եւ բազում այլ ֆելիետոններ: Այդքան հեռվից այսպես խորը եւ ժշմարիտ ըմբռնել բոլշևիզմի էությունը՝ ուղղակի ապշեցուցիչ էր:

1920 թվականին «Կարմիրների» քարտեզն արդեն անցնում էր նաեւ Լեռ Կամսարի հայրենիքով: Եթե երգիծաբանը «մինչ աքլորականչը» արդեն «երեք անգամ ուրացել էր» Լենինիգմը, հիմա պետք է դեմ-դեմի հայտներ իր վերաբերմունքը ահասարսուռ ամբողջատիրությանը: Աեիթը երկար սպասեցնել չտվեց: Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո, երբ բանտում կացնահարել էին դաշնակցական հայրենիքի ըմկոյալներին, երգիծաբանը գիշերով իր ընկերոջ հետ չանսալով արգելանքը՝ բանտ էր թափանցել եւ գաղտնի հողին էր հանձնել արյան ծապաղիքի մեջ գանգահատված մարմինները:

Է, ո՞վ կդիմանար այսպիսի «ստոր դավաճանության»: Հաջորդ առավոտն իսկ սովետական միլիցիան սկսեց փնտրել հանդուգն չանսացողին: Բարեբախտաբար այդ քաոսի մեջ երգիծաբանը հաջողացրեց ձողուպրել Պարսկաստան:

Բայց դե սովետական կառավարության մեծահոգությունը չափ ու սահման չունեիր դեմ մեղաշնչածների նկատմամբ: Բազում մտավորականների հետ Սովետական Հայաստանը հայրենիք հրավիրեց նաեւ Լեռ Կամսարին: Պայմանը մեկն էր՝ միասին կառուցել նոր, հավասար եւ արդար հասարակություն: Ո՞վ կմերժեր այսչափ համամարդկային նախաձեռնությունը: Եւ 1921 թ.-ից սկսած գրողը բոլշևիկների կենտրոնական օրգան «Խորհրդային Հայաստանի» ամիսոնջ աշխատակիցն էր, եւ օրը օրին տպվում էին նրա

Ֆելիետոնները՝ ծիծաղ պարզեւելով հայ ժողովրդին: Նորաստեղծ կառավարությանը նույնպես դուր էին գալիս գրողի կամիթներն ուղղված արտաքին իմպերիալիստական աշխարհին, դաշնակցական լիդերներին, հոգեւորականներին եւ «հին մնացուկներին»: Դա է վկայում այն փաստը, որ երբ 1931 թվականին պրոլետ գրողները կազմակերպեցին Լեւ Կամսարի «գտումը», կառավարությունը ոչ միայն ազատեց երգիծաբանին, այլեւ թշակ նշանակեց, որ նա հնարավորություն ունենա առանց նյութականի մասին մտածելով, զբաղվի միայն գրելով: Երգիծաբանը փոխանակ լավությամբ լավությամբ պատասխաներ, փորձեր հարմարվել, տեղի տալ, մի փոքր վարձահատույց լինել՝ եթե չփառաբանել, գեթ այժմ փակել արդեն ակնհայտ իրողության հանդեպ, երախտամոռ ապիրատը հատու գրիչը շրջելով 180 աստիճան՝ ուղղեց ընդդեմ բոլշեւիկյան իշխանավորի եւ տոտալիտար համակարգի: Չփոխեց, էլի, չփոխեց իր «գեշ» բնույթը՝ բոլոր իրավիճակներում եւ բոլոր ժամանակներում խփել անարդար իշխանավորին, որ պաշտպանած լինի հալածվածին, խեղճին, մերժվածին եւ արդարին:

Արդեն սկսվել էր «կարմիր տեռորը»՝ ձերբակալություն, աքսոր, բանտարկություն, գնդակահարություն: Վախենալու եւ ընկրկելու փոխարեն, Լեւ Կամսարն իր «գտման» ժամանակ 100 հոգիանոց դաշիժում կոմունիստ ղեկավարների երեսին շարտեց.

- Դուք ավելի վատն եք, քան թուրք կառավարությունը: Նրանց իշխանությանը ես ազատ էի գրում:

«Խեղճ» լեւ Կամսարի կառավարությունը, որն իր ձեռքով էր կանչել եւ բերել այս մարդուն՝ ձեռքը ցավո ընկավ: Ախր, հեշ մյուսների պես իրեն չէր պահում անկախ էր, անվայելուչ ըմբոստ, իր գլխից ձեռք քաշած եւ իսկի իրեն տրված շնորհները չէր գնահատում: Խելքի բերելու համար անշուշտ պետք էր պատժել: 1935 թ. նոյեմբերին կոմունիստական իշխանության համբերության բաժակը լցվեց, եւ դաստիարակելու մտքը Չեկան ձերբակալեց Լեւ Կամսարին, մեղադրելով նրան ֆաշիզմի մեջ:

- Ես ոչ թե ֆաշիստ, այլ ֆաշիստներից էլ դեմ եմ, քանի որ ֆաշիստները ազգային սոցիալիստներ են, իսկ ես առհասարակ սոցիալիզմ չեմ ընդունում, լինի դա ազգային կամ ոչ ազգային,- հայտարարեց հանցապարտը:

Հետագա դաստիարակումն ու ամծի վերափոխումը շարունակվեց Երեւանյան բանտում, երեք տարի Սիբիրում եւ տասնյոթ տարի բասարգեչարյան աքսորում:

Աքսորի կեսերին կոմունիստները որոշեցին ստուգել՝ արդյո՞ք արդյունք տվել է իրենց պատիժը, եւ Չեկան հրահանգեց Լեւ Կամսարին հետեւել եւ տեղեկագրեր ներկայացնել Ստեփան Չորյանի, Ավետիք Իսահակյանի եւ Լեւոնյանի վերաբերյալ, խոստանալով ազատել եւ վերականգնել նրա գրելու իրավունքը:

Բայց դե ֆիզիկական պատիժը գաղափարական կռվում միշտ տանուլ է տալիս: Երգիծաբանը առանց վարանելու Չեկայի նախժիրը հայտնեց իր գրչակից ընկերներին: Դե ինչ, ուրեմն պետք էր երկարացնել պատժաչափը, այնքան որքան անհրաժեշտ էր յուրաքանչյուր նորմալ մարդու վերադաստիարակելու եւ ճիշտ ուղու վրա դնելու համար: Այո, նորմալ մարդու եւ ոչ Լեւ Կամսարի նման անաղուսաց ու անուղղա մի ընդդիմախոսի, որ այդպես էլ մի դրական բան չէր տեսնում մեր լայնաբձակ եւ փառապանծ սովետական հայրենիքում: Տեսնելով, որ հալածելով արդյունքի չեմ հասնում, կոմունիստները որոշեցին խրախուսանքի օգնությանը դիմել: Հիսունականների սկզբին Կենտկոմը Լեւ Կամսարին աքսորից Երեւան է հրավիրում եւ սովետական կոմեդիա գրելու հայտ է ներկայացնում, խոստանալով բարձր հոնորար, ներկայացման իրականացում թատրո-

նում տոկոսային վճարումով եւ ստալինյան մրցանակ: Թվում է էլ ի՞նչ կարող էր երազել սովամահության եւ թշվառության եզրին հասած հուսահատ եւ մոռացված վտարանդին: Միանգամից եւ՛ փառք, եւ՛ փող, եւ՛ վերադարձ դեպի հասարակություն:

Բայց դե «խելին խրատն ի՞նչ կանի՝ սելին սապոնը»:

Չէ, չկարծե՛ք Լեռ Կամսարը վիրավորված կամ չարախնդրո՛ւմ մերժեց կոմունիստների արդեն որերորդ անգամ մեկնած օգնության ձեռքը: Նա մեկնած ափի մեջ հոժարակամ եւ հաճույքով պարզեց «Պլենում» թատերակը:

Ափսոս այս տարեգրքի սահմաններում հնարավոր չէ ներկայացնել ամբողջ պիեսը, որպեսզի ընթերցողը վերջնականապես համոզվի եւ տեսնի Սովետական Հայաստանի այդ ապերախտ եւ անառակ զավակի վերաբերմունքն իր ապրած երկրի եւ իր ապրած ժամանակի հանդեպ:

Հիշելով եւ խնկարկելով այն միլիոնավոր անմեղ զոհերին, որոնք ոչ միայն չէին ընդդիմացել, այլեւ փառավորել ու ներթողել էին բոլշեիկներին յուր հրեշավոր առաջնորդներ Լենինի եւ Ստալինի հետ միասին, մեզ մնում է սովետական իշխանությունների Լեռ Կամսարի հանդեպ հանդուրժողականության եւ ներողամտության վերաբերյալ վերն առթած զարմանքն, էլի թողնել ապշեցուցիչ զարմանք...

Ստորեւ ներկայացնում եմ հատվածներ թատերախաղից, որը ձեռագիր է եւ պահվում է Լեռ Կամսարի ընտանեկան արխիվում:

ՊԼԵՆՈՒՄ

Նախագահ.- Ընկերներ, Հայաստանի խորհրդայնացման 25-ամյակին նվիրված հորեղանակա՞ն միստը կհամարե՞մ քացված: (Ծափեր):

Սոցիալիստական այն շինարարությունը, որ կատարվեցավ այս հաշվետու ժամանակաշրջանում, անկարելի է սեղմել մէկ միստի մէջ: 25 տարի առաջ այս երկրում կիշխէր դաշնակցական կուսակցությունը, որ քայքայած էր երկրի էկոնոմիկան ու երկիրը մատնած պարտիզանական թշվառության: Ժառանգելով այդպիսի մի երկիր, մեր կուսակցությունը կարողացավ ամենակարճ ժամանակում վերջ տալ այդ պրիմիտիվ թշվառությանն ու երկիրը վերածել կատարյալ դժոխքի: (Ծափեր):

Այստեղ հավաքված պատգամավորները մէկ առ մէկ պիտի նշեն ձեզ այն էտապները, որով Լենինի կուսակցությունը հասավ անմախճութաց այս վերելքին:

.....
Այժմ ձայնը կպատկանի Հայաստանի գրողներու միության նախագահ ընկ. Արմեն Հակոբյանին:

Հակոբյան.- Ընկերներ, մեր միությունը կազմվեցավ Հայաստանի խորհրդայնացման առաջին տարին: Մենք ըստ մեծի մասին ոտանավորներ գրողներ ենք: Մեզ հրամայված էր հետևել մեր սոցիալիստական երկրի անցուդարձին եւ կուսակցության ու կառավարության բոլոր շարժումները ոտանավորի վերածել: Կգրէինք երեք տուն: Առաջին, երկրորդ՝ սոցշինարարություն, երրորդ տուն՝ ներքող մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինին: Երբեմն, երբ ներքողի շտապ կարիք կար, մեկ տուն շինարարություն, երկու՝ ներքող: Չէր քացառված նաեւ ամբողջովին ներքող գրելը:

Ընկերներ, մեզի չեն կարդար: Հին նախահեղափոխական շրջանի գրողները կկարդան: Մեր կազմակերպած գրական հանդեսներու մէջ, երբ իմացվի, որ ելույթ ունեցողը պրոլետ գրող է, հրդեհէ փախչողի մնա՞ն ինքզինքնին դուրս կնետեն դուռնէն ու պատուհաններէն: Սա անհանդուրժելի երեւույթ է, ու ես հատկապէս կխնդրէի այս համագումարին վճռական միջոցներ ձեռք առնել, այլապէս մենք կդառնանք միայն խուլ ու համբերու երգիչ:

Երկրորդ համաշխարհային պատերազմին սաստիկ ատեցիք հիտլերյան Գերմանիային ու Բեռլինի գրավմանը մասնակցեցինք 16-ոտնյա քերթվածներով: Ունենք ամեն կարգի շքանշաններ: Պատերազմէն վերջ տուն վերադարձուցինք մեր հերոս զինվորներուն ու պսակեցինք իրենց սպասող աղջիկներ-

րու հետ՝ ակտիվ մասնակցություն ցույց տալով այդ առթիվ տեղի ունեցող կերուխուսին: Բայց մեր աչքից չվրիպեց նաև որդեկորույս մայրիկը: Անոնց համար մենք լացինք, բայց կարճ, որ չխանգարե՛ր կրկում տիրող հաղթանակի ցնծությանը: Այդ մայրերու վիշտը մենք լացինք չակերտներու ու փակագիծներու մէջ: Բայց այնուամենայնիվ, ընկերներ, ես այսօր պիտի ահազանգեմ, որ գրողներու թեման նվազեր է ու շուտով կհատնի: Մենք այս թուլէիս կցված ենք Հայաստանի միլիցիական վարչությանը, քանի մը կարգապահական ոտանավոր ունենք գրելու՝ եւ վերջ: Ջաղացը հատիկ չունի եւ շուտով քարը քարի քսվի պիտի: Էներգիա չի պակսեր մեզի, միայն թող նյութ տրվի երգելու: Ես վերջացուցի: (Ծափ):

Նախագահ.- Ձայնը կպատկանի Լուսժողովմատին կից ուղղագրական սեկցիայի նախագահ ընկեր Մելքումյանին:

Մելքումյան.- Ընկերներ, կար ժամանակ, երբ կկարծէին, թե լեզվին եւ ուղղագրական կանոններուն ձեռք տալ չի կարելի: Մենք, սակայն, 24 թվին ձեռք տվինք ու աշխարհը չքանդվեց. 25 թվին նորէն ձեռք տվինք ու նորէն չքանդվեց, ատկէ քաջալերված սկսեցինք ամէն տարի ձեռք տալ ու փոխել հայոց լեզվի ուղղագրությունը: Եվ իրոք: Հունաստանն ու Հայաստանը միեւնոյն վիճակակից հին ազգեր են, երկար տարիներ տաճկական բռնակալության տակ տառապած: Ինչո՞ւ մէկը հի-ով գրվի, մյուսը՝ հո-ով: 24 թվին մենք ընդունեցինք Մանուկ Աբեղյանի ուղղագրությունը եւ Հունաստանն ու Հայաստանը հավասարապէս հո-ով գրելով՝ ստիպեցինք հի-ին լռել ու բոլորովին ձայն չհանել բառի սկզբին ու թույլ տալ, որ հո-ն ձայն հանէ: Իսկ հի-ն, որպէսզի պարապ չնստի տուն, կարգադրեցինք «Երեւան» եւ բոլոր եչ-ով սկսվող բառերուն կցվել եւ կիսաձայն հանել:

Բայց մենք ընդունելով անկուսակցական գիտնական Մանուկ Աբեղյանի ուղղագրությունը վիրավորած եղանք շարք մը կոմունիստ եւ մեր կուսակցության նվիրված լեզվաբաններու, որոնք նույնպէս կուզէին խառնել քիչ մը մեր լեզուն: Այդ նորոնծա լեզվաբաններուն չվիատեցնելու եւ ընդհակառակը քաջալերելու համար հինգ տարի ետքը մեր քերականությունը բացինք Արարատ Ղարիբջանի առջեւ ուզածին չափ խառնելու համար: Երբ ակեկոծությունը դադրեցավ հայ քերականության մէջ՝ հետզհետէ Սեւակին, ապա ոչինչ չիմանալու պրոֆեսոր Գեորգ Աբովին ու Հովիկ Մելիքյանի տրամադրության տակ դրվեցավ: Հրապարակէն անհետանալով ստատիկ հայ քերականությունը՝ երկու տող բան գրող մը գրիչը ձեռք վերցնելով ստիպված էր հեռախոսով հարցունել ինֆորմյուրոյին՝ թէ այսօր հացը հի-ո՞վ կգրվի, թէ հո-ով: Եվ օրական երկու անգամ. վասնզի շատ ժամանակ առտվմէ մինչեւ կէսօրին առանձին

ուղղագրական կանոն կկիրառվէր մեր լեզվին մէջ, կէսօրէն մինչեւ իրիկունց՝ այլ: Հէր բացառված գիշերային ու ցերեկային ուղղագրությունը: Մեր կուսակցությունն որուն ողջ իմաստը իր հեղափոխության մէջ էր, քաջալերեց այս լեզվային հարաշարժությունը եւ ահա սա քսանհինգ տարի մեր լեզվին օրորոցը կօրորվի՝ առանց քուն բերելու հայ լեզվին:

Հայերէն լեզվի բառարանը երկար ժամանակ կուզեր երկու ռուս բառի հրավէր սարքել՝ բայց բառարանում տեղ չկար: Այդ պատճառով Լուսժողովումստն հանեց ու դէն շարտեց մեր բառարանէն «խորհրդային» ու «հեղափոխություն» բառերը եւ անոնց տեղ հրավիրեց Ռուսաստանէն «սովետական» եւ «ռեւոլուցիա» բառերը: Հյուրասիրություն մը, որ եթէ այս ընթացքով շարունակվի՝ հույս ունենք, որ հայ բառեր միայն հին տապանաքարերու վրա պիտի կարդանք: Եվ այդ լավ է: Ռուս լեզուն այն լեզուն է, որով կխոսի մեր առաջնորդ ընկեր Ստալինը, մեր Աստվածը: Չամչլանի «Հայոց պատմություն» մէջ Աստված հայ լեզվով է խոսեր: Ներկա աստված ռուսերէն կխոսի՝ մենք պէտք է սովորենք խոսել այդ աստվածային լեզվով: (Բումն երկարատեւ ծափ):

Նախագահ.- Ձայնը կպատկանի ներքին գործերու կոմիսար ընկ. Չուպովին:

Չուպով.- Ընկերներ, ներքին գործերի կոմիսարիստ՝ դա Չեկան է, պետական պատժիչ մարմին մեր պետության միակ հենարանը: Խորհրդային Միություն, դա ինքնին մի պատիժ է արդէն:

Մեր մեծ Լենին, խոսելով փարիզյան կոմունայի մասին կըսէ.

- Կոմունան պարտվեց որովհետեւ քիչ կտորեց: Մենք բոլշեւիկներս չուզելով կրկնել Փարիզի գործած սխալը սկսեցինք շատ կտորել, կտորել մարդկանց անխնա, կտորել գիշեր ու ցերեկ օրվա մէջ քսանչորս ժամ: 1921 թվին Հայաստան մտնելով, սկզբում կացինով կսպանէինք: Հետագային տեսնվեցավ, որ շիտակ է կացինի սարսափը մեծ էր ժողովրդյան վրա, սակայն իր արտադրական էֆեկտը քիչ էր ու չէր համապատասխաներ մեր ինդուստրիալ էպոխային: Սկսեցինք գնդակահարել մինչեւ 1925 թվականը: Այդ թվականին մեր պատժական քաղաքականությունը շրջադարձ կատարեց: Քաղաքականին զուգորդվեց տնտեսական էֆեկտ ստանալու խնդիրը: Եիշտ նույն թվականներին Մոսկվայում հարց դրվեց Ռուսաստանի հյուսիսը՝ բենեռային գոտին յուրացնելու: Կտրել Սիպիրի անծայրածիր անտառները, աշխատել անդրբենեռային արդյունաբերության մէջ եղավ օրվա լոզունգը եւ Միությանս բոլոր ծայրերէն սկսվեց տաժանակիրներու շարաններ դէպի հյուսիս: Մեր կոմիսարիստը այնուհետեւ խնամքով սկսեց բանտարկյալներ հավաքել եւ դրկել հյուսիս, հետեւյալ կարգով: Ռուսաստանէն կուգային հատուկ այդ նպատակով ընտրված

մարդիկ, կհագցնեին մեր բանտարկյալները եւ Հայաստանի կառավարությանը վճարելով բանտարկյալի կյանքի համար, կամենէին կտանէին «էտապներով»:

Այն չափով որ ան ատեններ մեր արդյունաբերությունը թույլ էր զարգացած, գերիվաճառությունը... Ը...ը, ներողություն, Ը... բանտարկյալավաճառությունը դարձավ մեր հանրապետության գլխավոր եկամուտի աղբյուրը: Օրական հազար, օրական հինգ հազար բանտարկյալ կբառնայինք ապրանքատար վագոնները, որոնք ամիսներով ժամբա երթալով, այնքան կոջլուտէին, որ բեխերն ու միուրեքն կծերմակէին այդ կենդանիներու միլիոնավոր ձվիկներով:

Մեր Միության հյուսիսային ձեռնարկությունները սկսեցին բարգավաճել ու եկամուտ տալ մեզի: Կառավարությունը շեշտը անասուններու վրայն էր փոխելով մարդոց վրա դրավ:

Ստալինն անմիջապէս հայտարարեց թէ՝ «մարդն ամենաթանկ կապիտալն է» ու 1943 թվին արդէն դեկրետ հայտարարվեց, որ չամուսնացած օրիորդներն ալ կրնան ծնել ամուսնացածներուն հավասար: Եվ մեր իզական սեռին արգանդները բացվելով սկսեց անվերջ ծնել մեզի «կապիտալ»:

Չեկայի առջեւ նոր խնդիր էր դրված: Ինչպէ՞ս բանտարկել այդ հոծ մասսան առանց որեւէ հանցանք հագցնելու իրենց: Պէտք էր ստեղծել նորանոր հանցանքներ եւ դնել գործածության մէջ:

Ընկերներ, ես այժմ կանցնեմ հանցանքներու ստեղծագործության:

Լենինի մահվան ու Հոկտեմբերյան մեծ հեղափոխության տարեդարձի օրերը կուտային մեր հանցավորներու մեծագույն տոկոսն: Այն օր, երբ մեռավ Լենինը, եթէ մէկը մի փողբիկ ժպիտ խաղցուններ շրթունքին, անմիջապէս կծերբակալվէր մեր օրէնսգրքի 67-րդ հոդվածի հիման վրա: Ատոր հակառակ Մեծ հոկտեմբերի տարեդարձի օրը եթէ մէկը համարձակվէր տխրել՝ նույն հոդվածի տակ իյնալով «ուղղիչ լագերի» կդատապարտվէր: Այդ պատճառով, հեղափոխական օրվա մեռելները պար ու ծիծաղով կթաղվէին իրենց հարազատներու կողմէ, իսկ Առաջնորդի մահվան օրվա ամուսնացողները լաց ու կական կբարձրացունէին գրկախառնվելիս:

Այս մեկ:

Պատժի երկրորդ աղբյուրն էին մեր թերթերը:

Ինչպէս գիտէ խորհրդային թերթը լույս չի տեսներ կարդալու համար, այլ ծխախոտ ծխելու կամ մէջը մթերք փաթեթելու շուկա երթալիս: Իսկ բոլոր օրաթերթերու վրա ամենայն օր անխափան կտալի մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինի նկարը:

Այն թերթի մէջ, ուր կա Ստալինի պատկերը փաթաթել մթերք՝ կդատապարտվէր մեր օրէնսգրքի բոլոր հոդվածներովը միասին: Ըստ այդ հոդվածներու չոր մթերք փաթեթող կդատապարտվէր հինգ տարի ազատազրկման. իսկ թաց՝ օրինակ, թթու կաղամբ կամ բիբար կամ տոմատ փաթեթող՝ տասը

տարվա: Իսկ եթե մէկը այդ նույն թերթը արտաքնոցը կտանի քնական կարիքի համար՝ այդ մարդը կդատապարտվի քսան տարի ազատազրկման, տասը տարի ծայնագրկութան եւ հինգ տարի գնդակահարութան:

Այժմ թույլ տվէք ինձ մի փոքրիկ շեղում, բացատրելու թէ ի՞նչ կնշանակեի հինգ տարվա գնդակահարությունը:

Ընկերներ, մեր բոլոր բանտերու մէջ կան «մահական կամերաներ»: Այդ կամերաներ կնետվեն գնդակահարության դատապարտվածները մինչեւ պատժի ի կատար ածելը: Բանտային աշխատակցին հրամայված է օրական տասն անգամ բանալին փականքի ծակին մէջ խոթել, բայց չբանալ: Դատապարտյալը ամեն անգամ պիտի կարծէ, թէ եկան իրեն գնդակահարության տանելու ու կսկսի դողալ մահական դողով: Օրական տասն անգամ այսպէս գնդակահարվելով, ամսական երեք հարյուր անգամ կմեռնի մարդը, տարեկան երեք հազար վեց հարյուր, իսկ հինգ տարում՝ հինգ անգամ ավելի:

Այս է մեր «գերագույն պատիժ» ըսածն, այլապէս ի՞նչ պատիժ է թուական գնդակահարությունը որ, մեր ո՞ր քաղաքացին չի ցանկա այսօր մեռնել այդ հանկարծական մահով... ու ազատվել մեր ձեռքէն:

Պետք է նկատել, ընկերներ, խորհրդային առաջին տարիներում մեր գործը հաջող կերթար: Ժողովուրդն հինէն պահած էներգիա ունէր իր մէջը հանցանք գործելու: Մեր իշխանության ժամանակ մատնվելով սովի, թուլացավ ինկալ ու այլեւս հանցանք գործելու ուժ չէր մնացել վրան: Պէտք էր զոռով քաշել, ոտքի կանգնեցնել ու ստիպել, որ հանցանք գործէ: Մեր պատժիչ ապարատը խո՛ւմ չէ՞ր կանգնելու:

Այդ առթիվ մենք տարանք նաեւ համոզիչ աշխատանքներ, կոչ ընելով անոնց սոցիալիստական զգացմունքին:

Այս բոլորը, ընկերներ, ամօրյա, պատահական հանցանքներու շարքին կպատկանէին: Ասկէ զատ կային նաեւ ժառանգաբար անցնող հանցանքներ, որոնք մեզի բանտարկյալներու մնայուն կադրեր կմատակարարէին:

Այսպես՝ դաշնակը միշտ դաշնակ կծնէր, կուլակը՝ կուլակ, տէրտէրը՝ տէրտէր, սպեկուլյանտը՝ սպեկուլյանտ, որոնք բոլորն ալ ձերբակալության ենթակա էին ամբողջ սերունդներով:

Այսպիսով, ընկերներ, հանցանքներու թիվը այսպես բազմանալով, մեր կողմէսը սկսեց իսկայական ծավալի հատորներու հասնել, թղթե կրիզիս առաջ բերել մեր Միության մէջ: Հարց դրվեցաւ խորհրդային արդարադատության առաջ: Ավելի նպատակահարմար չէ՞ արդոք, որ փոխանակ հանցավոր շարժումները արձանագրելու մեր օրէնսգրքերու մէջ՝ նշանակել այն շարժումները միայն, որոնք հանցանք չէին: Սակայն այս ծրագիրը չիրագործվեց այն պատճառով որ՝ նախ դժվար էր գտնել այնպիսի շարժում, որ հանցանք չնկատվէր, երկրորդ՝ եթէ ճարվէր իսկ, այդ շարժումները պէտք էր պահեստի ունենալ,

ապագայում հանցանքների թիվը մեծացնելու համար: Որովհետև, օր մըն ալ կրնար լազերային վարչությունը Հայաստանի կառավարութենէն 50000-ի փոխարէն 100000 կալանավոր պահանջել, ի՞նչ պէտք էր ընել:

Բայց ընկերներ, մենք հեղափոխական կուսակցություն չէինք լինի, եթէ չհաղթահարէինք այդ դժվարությունը:

Մենք ստեղծեցինք «օսոթի սովեշչենիէ» անուն մարմին մը, որուն թույլ էր տրված ուզած մարդուն, առանց որեւէ մեղադրանք առաջադրելու, ուղղակի բռնել ու Սիպիր աքսորել:

Առաջին առթիվ հարկավ ձերբակալվեցան խոշոր ու անձոռնի քիթ ունեցողները, կարձախասակներն ու ծաղկատարները կանանց շարքերէն, իսկ տղամարդոցմէ անոնք, որք զեղեցիկ կին ունէին:

Վերջապես, ընկերներ, Չեկան ըրավ բոլոր հնարավորը երկիրը դատարկելու համար, իսկ այսօր, որ մեր կամքէն անկախ մարդիկ կբազմանան, այստեղ դեր կխաղա միայն ու միայն Դարվինի «բնական ընտրության» թէորիան: Խորհրդային Միությունը կգտնվի այն երկրագնդի վրա, որուն բնության օրէնքները պարտադիր են նույնպես:

Ես վերջացուցի: (Ծափեր):

1945 թ.

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև բերված ցուցակը ամբողջական և լիարժեք չէ, քանի որ մինչև 1915 թ. գրվածների մի մասը (գրել սկսել է 1910 թվականից) կորել է գաղթի ճանապարհին: Որոշ մասը (1910-1915 թթ.) կարելի է գտնել Վանում հրատարակվող «Աշխատանք» թերթում, եթե միայն պահպանվել է:

1935 թ. նոյեմբերի 25-ի ձերբակալման ժամանակ չեկիստների կողմից բռնագրավված ձեռագրերը պետք է լինեն ՊԱԿ-ի արխիվներում՝ եթե միայն պահպանել են:

Շատ կորսված և ոչնչացած ձեռագրեր (կորել է աքսորի տարիներին, ոչնչացել է 1946 թ. երևանյան հեղեղի ժամանակ) հնարավոր է վերականգնել 1916-1935 թվերին արդեն լույս տեսած հայալեզու մամուլից: Հնարավոր է նաև հետագա տարիների մամուլային հրապարակումների մեջ լինի այնպիսի գործ, որի ձեռագիրը արդեն չկա:

Հեղեղից վնասված ձեռագրերի և նամակների որոշ մաս գտնվում է Գրականության թանգարանում:

Պետ. արխիվում, Կենտկոմի, Պակի և այլ արխիվներում պետք է փնտրել զանազան դիմումներ և նամակներ, ինչպես նաև 1931 թ. գտման արարողության արձանագրությունը և չեկայի հարցաքննության գործերի թղթապանակները:

Նամակներ և որոշ ձեռագրեր հնարավոր է գտնել նաև այլ հեղինակների կամ մարդկանց արխիվներում:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ըՆՏԱՆԻՔԻ արխիվում պահպանվում է՝

1. Գրքերում հրատարակված և անտիպ բազմաթիվ ֆելիետոններ (1935 թ., 1951 թ., 1955 թ., 1956 թ., 1960 թ., 1961 թ., 1962 թ., 1964 թ.):
2. Անթվակիր որոշ նյութեր, անտիպ:
3. Խորհրդային քաղաքացու օրագիրը 1925-35թթ.: Տպագրվել է 2008 թ. «Լուսաբաց» հրատարակչատան կողմից «Մահապուրծ օրագիր» վերտառությամբ:
4. Բանտի օրագիր 1936 թ., անտիպ:
5. Խորհրդային օրեր 1945-1946 թթ., անտիպ:
6. Խորհրդային օրեր 1947 թ., անտիպ:
7. Խորհրդային օրեր 1948 թ., անտիպ:
8. Խորհրդային քաղաքացու օրագիրը 1949 թ., անտիպ:
9. Չապրած օրեր, Կարմիր ծիծաղ 1950 թ., անտիպ:
10. Կարմիր ծիծաղ 1951 թ., անտիպ:

11. Կարմիր օրեր 1952 թ., անտիպ:
12. Կարմիր օրեր 1953-1958 թթ.: Մեծ մասը տպագրված է «Նաիրի» հրատարակչության կողմից 2000 թ.-ին նույնանուն խորագրի տակ:
13. Կարմիր օրեր 1959 թ.: Հրատարակել է «Համգակ» հրատարակչությունը 2009 թ.-ին «Սոցիալիզմի Սահարա» վերտառությամբ:
14. Կարմիր օրեր 1960-1965 թթ., անտիպ:
15. Ֆելիետոններ 1963-1965 թթ., անտիպ:
16. Նամակներ բանտից և աքսորից, անտիպ:
17. Կնոջ՝ Իսկուհու հուշերը երեխաների մասին, անտիպ:
18. Սիրուհի Կարինեի նամակներն՝ Իսկուհուն, անտիպ:

ԹԱՏԵՐԱԿՆԵՐ

1. Պլենար նիստ, գրված հիշողությամբ՝ բնագիրը Չեկան բռնագրավել է: Անտիպ:
2. Մի զուտ մարդու զտման պատմություն 1931 թ. հոկտեմբերի 27, անտիպ:
3. Դեպի պրոլետ գրականության հեգեմոնիան, 1926 թ.:
4. Սաստիկ կոմունիստներ՝ երկու տարբերակ, 1927 թ.:
5. Կոոպերացիա 1927 թ., անտիպ:
6. Պողոս Առաքյալը Կորնթոսին մեջ. 1926 թ.:
7. Դեպի սոցիալիզմ տանող կարճ ճամփան, անտիպ:
8. Թատերական կատակներ, 1926 թ., անտիպ:
9. Ի՞նչ է կոոպերացիա, անտիպ:
10. Բուխարինի Ռուսաստանը, Հոկտեմբերյան հեղափոխություն, Կո՛րչի անգրագիտությունը:
11. Հավենի տարեդարձը:
12. Պարտիզան պոետներ 1953 թ., անտիպ:
13. Կասկածոտ ամուսին, անտիպ:
14. Մահափորձ մի հին հեղինակի վրա:
15. Հոգու զավակ, դրամա, մի քանի տարբերակ, անտիպ:
16. Քրիստոսի երկրորդ ծնունդը, 1949 թ.:
17. Փոքրիկ Մուկուժի արկածները, 1950 թ.:

**Հրատարակության պատրաստեց՝
Վանուհի Թովմասյան**